

ՀՀ Արմավիրի մարզի Մրգաշատի գյուղական
համայնքի ղեկավար Գ. Դանիելյան
2015թ. 1-ին կիսամյակի կատարած աշխատանքների

Հաշվետվություն

Մասնակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի
աշխատակից՝ Արմեն Դարբինյանի, համայնքի ավագանու և 135 բնակիչների:

16-07-2015թ.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաշատի գյուղական համայնքի
ղեկավարը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նրանից
բխող օրենսդրական և ենթօրենսդրական ակտերով, «Տեղական ինքնակառավարման
մասին», «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով, համայնքի ղեկավարի
աշխատակազմի, ավագանու և գյուղապետարանի ենթակայության տակ գտնվող
հիմնարկների աշխատակիցների միջոցով իրականացրել է իրեն վերապահված
իրավասությունների շրջանակներում իր լիազորությունները:

Հիմնական նպատակը՝ համայնքի բնակչության կենսամակարդակի բարձրացումն է,
որին հասնելու ճանապարհին սահմանվել են կարևորագույն սոցիալ-տնտեսական
խնդիրները, որոնք էլ անհրաժեշտություն է եղել լուծելու 2015թ. 1-ին կիսամյակի
ընթացքում: Այդ խնդիրների լուծման համար կարևորագույն պայման է հանդիսացել
Արմավիրի մարզպետի, մարզպետարանի աշխատակազմի և համայնքի ավագանու ամենօրյա
հոգատար վերաբերմունքը և համայնքի խնդիրների լուծմանն աջակից լինելու
պատրաստակամությունը, որի արդյունքում արձանագրվել է որոշակի հաջողություններ,
որոնք ըստ բնագավառների ներկայացնում են Ձեզ:

Գյուղատնտեսության և բնապահպանության բնագավառ

Գյուղապետը աջակցում է համայնքի բնակչության գյուղատնտեսական
աշխատանքների իրականացմանը, ինչպես նաև գյուղ. մթերքների իրացմանը:

Շտնոդական աշխատանք է տարվում ոռոգման ջրի մատակարարման, ինչպես նաև
կազմակերպվում է գյուղ. մթերքների մշակման ուղղությամբ կատարվող աշխատանքներին:

Համայնքը ունի շուրջ 1055 գլուխ խոզոր եղջերավոր, 1680 մանր եղջերավոր անասուններ
և 700 գլուխ խոզ: Համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է ցորենի, բանջար-
բոստանային կուլտուրաների, առվույտի, պտղաբուծության և խաղողի մշակությամբ:

Համայնքի հողերից շուրջ 180 հա չի մշակվում, որի հիմնական պատճառներն են՝

1. Հողասեփականատերերը բացակայում են համայնքից
2. Թունաքիմիկատների բարձր սակագները և անորակությունը
3. Ոռոգման ջրի խիստ սակավությունը

Ուշադրության կենտրոնում է պահվում բերքի իրացման, գյուղատնտեսական
մշակաբույսերի վնասատուների դեմ պայքարի աշխատանքները և պարբերաբար
կատարվում են ներտնտեսային ոռոգման ցանցի մաքրման աշխատանքները:

Մարզպետարանից համայնքին հատկացվել է սելիտրա, գարու սերմացու և դիզելային վառելանյութ:

Անմիջական հսկողություն է իրականացվում անասնաբուժական ծառայության գործում՝ ժամանակին կատարվում են բոլոր հակահամաճարակային միջոցառումները կենդանիների հիվանդությունների կանխարգելման ուղղությամբ:

Հետևողական և սխտեմատիկ հսկողություն է սահմանվում հանձնաժողովի կողմից առևտրի, հասարակական սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում գործող օբյեկտների գործունեության վրա: Ներկայումս համայնքում գործում է 16 առևտրի օբյեկտ:

Հողաշինության և հողօգտագործման բնագավառ

Ամենօրյա ուշադրության կենտրոնում է գտնվում և օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացվում հողերի նպատակային օգտագործման վրա:

Ապահովվում է համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների պահպանումը, շահագործումը և նորոգումը:

Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառ

Կառավարության սահմանած կարգով վերահսկողություն է իրականացվում համայնքի քաղաքաշինական գործունեության նկատմամբ:

Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափազրման և սահմանների ճշգրտման աշխատանքներ, տրվել են ճշտված իրավիճակային հատակագծեր: Պարբերաբար կատարվում է խմելու ջրի ջրազծերի վթարների հայտնաբերման և վերացման աշխատանքներ:

Սահմանվում է հսկողություն խմելու ջրի, որակի, ինչպես նաև վարակազերծման նկատմամբ:

Պարբերաբար կատարվում են աղբահանման աշխատանքներ:

Մշակույթի և երեսասարդության, կրթության, առողջապահության սպորտի, սոցիալական ծառայության բնագավառ

Հատուկ ուշադրություն է դարձվում կրթության, մշակույթ և մարզական օջախների ռացիոնալացմանը և նպատակային գործունեությանը:

Համայնքում գործում է 2 միջնակարգ դպրոց:

Մշակերտների թիվը՝ 643

Աշխատողների թիվը՝ 110

Համայնքում գործում է նաև 1 երաժշտական դպրոց, որն ունի 70 սան:

Գյուղապետարանի ուշադրության կենտրոնում է դպրոցը: Կրթության որակը գտնվում է բարձր մակարդակի վրա:

Համայնքի մանկապարտեզ են հաճախում 111 երեխաներ: Մեկ երեխայի հաշվով փաստացի ծախսը կազմել է մոտավորապես 6000 դրամ, սակայն ծնող, գումարը նախատեսվել է 2000 դրամ, մնացած ծախսերը կատարվել է գյուղապետարանի կողմից:

Մեծ ուշադրություն է դարձվում թոշակառուներին՝ Ապրիլի 7-ին կազմակերպվել է միջոցառում նվիրված թոշակառու կանանց որի ընթացքում բաժանվել են նվերներ : Համայնքում

կազմակերպվել է միջոցառում նվիրված Հայրենական Մեծ պատերազմին և Արցախյան հերոսամարտին, որի ընթացքում 50000 ական դրամ հանձնվեց Հայրենական մեծ պատերազմի վետերանին, Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքներին և վիրավոր ազատամարտիկներին :

Մշակույթի տանը գործում են ըմբշամարտի, պարի և նկարչական խմբակներ:

Համայնքում գործում է « Խնամակալության և հոգեբարձության» հանձնաժողով, որի հիմնական խնդիրը թափառաշրջիկ, անօթևան երեխաների հայտնաբերումն ու դաստիարակումը: Ի ուրախություն մեզ՝ համայնքում նման երեխաներ չկան, պարբերաբար դրամական օգնություն է տրվում երկկողմանի և միակողմանի ծնողագուրկ երեխաներին:

Ֆինանսական աջակցություն է տրամադրվել համայնքի սոցիալապես անապահով 36 ընտանիքների: Մահացածների ընտանիքներին տրվել է միանվագ դրամական օգնություն 50000- ական դրամի չափով:Յուրաքանչյուր ծնված երեխայի համար 30000 դրամ օգնություն:

Համայնքում հաշվառված են 653 թոշակառուներ, 60 նպաստառու ընտանիքներ:

Համայնքի ընդհանուր տնտեսությունների թիվը կազմում է 1944 , որից առկա՝ 1820 :

Առկա բնակչության թիվը՝ 6162:

Համայնքում բարձր է պատասխանատվությունը զորակոչի նկատմամբ:

Ֆինանսական բնագավառ

Աստիճանաբար բարելավվում է համայնքի ֆինանսական կացությունը՝ իրականացնելով հարկային և ոչ հարկային եկամուտների, տեղական տուրքերի և վճարների սահմանման և գանձման ճկուն քաղաքականություն:

2015թ. 1-ին կիսամյակում հավաքագրված եկամուտները

անվանումը	2015 թվական		Կատարողական %
	այլան	փաստացի	
Հողի հարկ	10641.1	1017.2	9.6
գույքահարկ	5387.5	4006.1	74.4
Տեղական տուրք	210.0	51.7	24.6
Հողի վարձավճարներ	775.0	474.9	61.3
Պաշտոնական ընթացիկ տրանսֆերտներ	47153.1	47153.1	100
Այլ եկամուտներ	25.0	50.0	200
<i>Ընդամենը</i>	<i>64164.7</i>	<i>52753.0</i>	<i>82.2</i>

կատարված ծախսերը

	Ծախսերի անվանումը	2015թ տարեկան պլան	Փաստացի
1	Ընդհանուր բնույթի ծախսեր	53430.1	22771.6
2	Տնտեսական հարաբերություններ	4000.0	
3	Շրջակա միջավայրի պահպանում	4100.0	1766.4
4	Բնակարանային շինարարություն	2000.0	238.5
5	Առողջապահություն	600.0	600.0
6	Հանգիստ, մշակույթ	23756.0	7648.4
7	Կրթություն	22363.9	5145.0
8	Սոցիալական պաշտպանություն	13500.0	5880.0
	<i>Ընդամենը</i>	<i>123750.0</i>	<i>44049.9</i>

*Առաջնային և համայնքի համար գլխավոր
խնդիրներից են*

1. Երաժշտական դպրոցի շենքի վերանորոգումը
2. Ոսոգման ներսնտեսային ցանցի վերանորոգումը
3. Ներհամայնքային ճանապարհների վերանորոգումը

2015թ. ընթացքում համայնքի առջև ծառայած խնդիրների լուծման և համայնքի վիճակը բարելավելու համար հաշվի կառնվեն համայնքի բնակիչների կողմից առաջ քաշված բոլոր առաջարկություններն ու հիմնախնդիրները: Նպատակային կօգտագործվեն համայնքի բյուջեի միջոցները՝ բարձրացնելով բնակչությանը մատուցվող ծառայությունների և սպասարկումների մակարդակը և որակը, համայնքապետարանի և ձեռնարկությունների աշխատանքների արդյունավետությունը:

ՄՐԳԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝  Գ.ԴԱՆԻԵԼՅԱՆ

